ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Բրյուսել, 2009թ. ապրիլի 17
(OR. անգ)

2008/0070 (COD) PE-CONS 3747/08

EDUC 296
SOC 822
CODEC 1917

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Թեմա՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ Մասնագիտական Կրթության և Ուսուցման Եվրոպական Կրեդիտային Համակարգի (ՄԿՈՒԵԿ) հաստատման վերաբերյալ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մասնագիտական Կրթության և Ուսուցման Եվրոպական Կրեդիտային Համակարգի (ՄԿՈՒԵԿ) հաստատման վերաբերյալ

(Տեքստն ըստ ԵՏՏ-ի չափանիշի համապատասխանության)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հաշվի առնելով Եվրոպական Միության հիմնադրման միջազգային պայմանագիրը, մասնավորապես պայմանագրի 149(4) և 150(4) հոդվածները,

Հաշվի առնելով Հանձնաժողովի առաջարկը,

Հաշվի առնելով Եվրոպական Տնտեսական և Սոցիալական Կոմիտեի դիրքորոշումը[1],

Հաշվի առնելով Տարածաշրջանների Կոմիտեի դիրքորոշումը[2],

Գործելով համաձայն պայամանագրի 251 հոդվածում սահմանված ընթացակարգի[3],

---

1 2008թ. հոկտեմբերի 22-ի դիրքորոշում (Պաշտոնական հանդեսում դեռ չի հրատարակվել):

2 OJ C 325, 19.12.2008, էջ 48

3 Եվրոպական Կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի դիրքորոշում (Պաշտոնական հանդեսում դեռ չի հրատարակվել)

Մինչդեռ.

1) Քաղաքացիների գիտելիքի, հմտությունների և կարողությունների զարգացումն ու ճանաչումը ծայրահեղ կարևոր են իրենց անձնական և մասնագիտական զարգացման, մրցունակության, զբաղվածության ու սոցիալական կապվածության համար: Այս առումով նրանք պետք է հեշտացնեն աշխատակիցների և ուսումնառուների վերազգային շարժունությունը, նպաստեն եվրոպական աշխատաշուկայի պահանջարկի ու առաջարկի պահանջները բավարարելուն: Բոլորի մասնակցությունը ցկյանս ուսումնառությանը, անհատի՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ համատեքստերում ձեռք բերած ուսումնառության արդյունքների տեղափոխումը, ճանաչումն ու կուտակումը պետք է օժանդակվեն և կատարելագործվեն համայնքային մակարդակում:

2) 2000թ. Լիսաբոնի Եվրոպական Խորհուրդը հանգեց այն եզրակացության, որ որակավորումների մեծացված թափանցիկությունը պետք է լինի այն գլխավոր բաղադրիչներից մեկը, որն անհրաժեշտ է՝ համապատասխանեցնելու կրթության և ուսուցման համակարգերը գիտելիքահենք հասարակության պահանջներին: Բացի այդ, 2002թ. Բարսելոնի Եվրոպական Խորհուրդն ընդգծեց մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտում թափանցիկության ու ճանաչման մեթոդների կատարելագործման կարևորությունը:

3) ՄԿՈՒ նախագծերը՝ ցկյանս ուսումնառության գլխավոր հատվածներից մեկը, ուղղակիորեն կապված են ընդհանուր և բարձրագույն կրթության, ինչպես նաև անդամ յուրաքանչյուր պետության զբաղվածության ու սոցիալական քաղաքականությունների հետ: Իրենց խաչաձև ճյուղային ազդեցությամբ դրանք նպաստում են ոչ միայն եվրոպական տնտեսության մրցունակությանը և աշխատաշուկայի կարիքների բավարարմանը, այլև սոցիալական կապակցվածությանը, անաչառությանն ու քաղաքացիների մասնակցությանը և ներգրավմանը:

4) Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում եվրոպական ընդլայնված համագործակցությանը նպաստելու վերաբերյալ Խորհրդի 2002թ. դեկտեմբերի 19-ի որոշումը[1] (կոպենհագենյան գործընթաց) և «Կրթություն և Ուսուցում 2010» աշխատանքային ծրագրի իրագործման վերաբերյալ Խորհրդի և Հանձնաժողովի 2004թ. համատեղ միջանկյալ զեկույցը[2] շեշտադրում են մասնագիտական կրթության և ուսուցման կրեդիտների փոխանցման համակարգի կարևորությունը,

[1] OJ C 13, 18.1.2003, էջ 2
[2] OJ C 104, 30.4.2004, էջ 1

մինչդեռ Խորհրդի և Հանձնաժողովի 2008թ. առաջընթացի համատեղ զեկույցը[1] շեշտադրում է ՄԿՈՒ որակն ու գրավչությունը կատարելագործելուն ուղղված ջանքերը մեծացնելու կարիքը:

5) Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում եվրոպական ընդլայնված համագործակցության հետագա գերակայությունների վերաբերյալ Խորհրդի 2004թ. նոյեմբերի 15-ի շրջանակներում Խորհրդի և անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչների կայացրած եզրակացություններն առաջնություն էին տալիս ՄԿՈՒ կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգի մշակմանն ու իրագործմանը՝ ուսումնառուներին թույլ տալու հիմնվել իրենց ուսումնառության ուղիների շնորհիվ ունեցած ձեռքբերումների վրա մասնագիտական ուսուցման համակարգերում անցումներ կատարելիս:

6) Սույն երաշխավորության նպատակն է ստեղծել Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական կրեդիտային համակարգ (ՄԿՈՒԵԿ), որը կհեշտացնի որակավորում ստանալ ցանկացող անհատների ուսումնառության գնահատված արդյունքների փոխանցումը, ճանաչումն ու կուտակումը: Սա կկատարելագործի քաղաքացիների ուսումնառության արդյունքների ու թափանցիկության, վերազգային շարժունության և անդամ պետությունների ցկյանս ուսումնառության տարածքում տեղափոխելիության ընդհանուր ընկալումը, ինչպես նաև ազգային մակարդակում որակավորումների շարժունությունն ու համապատասխանությունը տնտեսության տարբեր ճյուղերում և աշխատաշուկայում: Ավելին, այն կնպաստի կրթության և ուսուցման ոլորտում եվրոպական համագործակցության զարգացմանն ու տարածմանը:

7) ՄԿՈՒԵԿ-ը պետք է հիմնված լինի Հավելված II-ում սահմանված սկզբունքների և տեխնիկական մանրամասնությունների վրա: Բացի այդ, դրա հիմքը պետք է հանդիսանան Մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովման վերաբերյալ Խորհրդի 2004թ. մայիսի 28-ի եզրակացություններում և Մասնագիտական կրթության ու ուսուցման որակի ապահովման հենքային եվրոպական շրջանակի հաստատման վերաբերյալ Եվրոպական Կառավարության և Խորհրդի երաշխավորությունում[2+] սահմանված որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:

---

1 OJ C 86, 5.4.2008, էջ 1

2 OJ …

+ OJ: խնդրում ենք ավելացնել սույն զեկույցի ամսաթիվն ու հղումները:

8) ՄԿՈՒԵԿ-ը կիրառելի է ուսումնառության բոլոր արդյունքների համար, որոնք պետք է կրթության և ուսուցման բազմազան ուղիների միջոցով սկզբունքորեն հասանելի լինեն ցկյանս ուսումնառության Որակավորումների Եվրոպական Շրջանակի (ՈԵՇ) բոլոր մակարդակներում, այնուհետև փոխանցվեն և ճանաչվեն: Հետևաբար, սույն երաշխավորությունը նպաստում է ցկյանս ուսումնառությունը խթանող, աշխատակիցների և ուսումնառուների զբաղվածությունը մեծացնող, շարժունության և սոցիալական ներգրավման նպատակներին: Այն հատկապես հեշտացնում է ճկուն և անհատականացված ուղիների մշակումը, ինչպես նաև ոչ ֆորմալ ու ինֆորմալ ուսումնառության միջոցով ձեռք բերված ուսումնառության արդյունքների ճանաչումը:

9) Որակի ապահովման թափանցիկ սկզբունքները, տեղեկատվության փոխանակումը և որակավորումների շնորհման համար իրավասու հաստատությունների միջև գործընկերությունների զարգացումը, ՄԿՈՒ ապահովողներն ու համապատասխան շահագրգիռ այլ կողմերը պետք է օգնեն՝ ստեղծելու փոխվստահություն, և աջակցեն սույն երաշխավորության իրագործմանը:

10) Սույն երաշխավորությունը պետք է հեշտացնի ՄԿՈՒ-ում և Կրեդիտների փոխանցման ու կուտակման եվրոպական համակարգում (ԿՓԵՀ) կիրառվող կրեդիտների համակարգերի համատեղելիությունը, համեմատելիությունն ու համալրելու հնարավորությունը, որն օգտագործվում է բարձրագույն կրթության հատվածում, ինչպես նաև այն պետք է նպաստի կրթության և ուսուցման մակարդակների միջև մեծ թափանցիկությանը՝ համաձայն ազգային օրենսդրության ու փորձի:

11) Պետք է աջակցել ոչ ֆորմալ ու ինֆորմալ ուսումնառության գնահատված արդյունքների վավերացմանը՝ համաձայն ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության որոշարկման ու վավերացման եվրոպական ընդհանուր սկզբունքների վերաբերյալ Խորհրդի 2004թ. մայիսի 28-ի եզրակացությունների:

12) Սույն երաշխավորությունը համալրում է Ցկյանս ուսումնառության Որակավորումների Եվրոպական Շրջանակի հաստատման վերաբերյալ Եվրոպական Կառավարության և Խորհրդի 2008թ. ապրիլի 23-ի երաշխավորությունը[1], որն առաջարկում է անդամ պետություններին սերտ կապեր հաստատել ՈԵՇ-ի և բարձրագույն կրթության ու ՄԿՈՒ կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական առկա կամ հետագա համակարգերի միջև: Եթե ՈԵՇ-ի

[1] OJ C 111, 6.5.2008, էջ 1

գլխավոր նպատակն է մեծացնել ձեռք բերված որակավորումների թափանցիկությունը, համեմատականությունն ու շարժունությունը, ապա ՄԿՈՒԵԿ-ը նպատակ ունի հեշտացնել անհատների ուսումնառության արդյունքների տեղափոխումը, ճանաչումն ու կուտակումը որակավորումներ ձեռք բերելու ճանապարհին:

13) Սույն երաշխավորությունը հաշվի է առնում Որակավորումների և կարողությունների թափանցիկության հասարակական շրջանակի վերաբերյալ Եվրոպական Կառավարության և Խորհրդի 2004թ. դեկտեմբերի 15-ի No 2241/2004/EC Որոշումն (Europass)[1] ու Կրթության և ուսուցման հասարակությունում վերազգային շարժունության վերաբերյալ Եվրոպական Կառավարության ու Խորհրդի 2006թ. դեկտեմբերի 18-ի երաշխավորությունը՝ Շարժունության որակի եվրոպական կանոնադրություն[2]:

14) Սույն երաշխավորությունը պետք է նպաստի տեղական ու տարածաշրջանային իրավասու մարմինների ներգրավմանը որակավորումների ազգային կամ այլ շրջանակներն ու համակարգերը ՄԿՈՒԵԿ-ին կապակցելու գործում:

15) Սույն երաշխավորությունը չպետք է նախապաշարմունք ունենա Մասնագիտական որակավորումների ճանաչման վերաբերյալ Եվրոպական Կառավարության և Խորհրդի 2005թ. սեպտեմբերի 7-ի 2005/36/EC Հրահանգի նկատմամբ[3], որն իրավունքներ ու պարտավորվածություն է շնորհում և՛ պետական իրավասու համապատասխան մարմնին, և՛ վերաբնակչին: ՄԿՈՒԵԿ-ի կիրառումը չպետք է ազդի աշխատաշուկայում մուտքի հնարավորության վրա, որտեղ մասնագիտական որակավորումները ճանաչվում են՝ համաձայն 2005/36/EC Հրահանգի: Բացի այդ, ՄԿՈՒԵԿ-ը ոչ մի նոր արտոնություն չի տալիս քաղաքացիներին՝ ձեռք բերելու ուսումնառության արդյունքների ավտոմատ ճանաչում:

16) ՄԿՈՒԵԿ-ի ներմուծումն ու իրագործումը կամավոր է՝ ըստ պայմանագրի 149 և 150 հոդվածների, հետևաբար, այն կարելի է նախաձեռնել միայն՝ համաձայն ազգային առկա օրենքների և կանոնակարգերի:

17) Քանի որ երաշխավորության նպատակներին (մասնավորապես անդամ պետությունների գործողություններին աջակցելն ու դրանք համալրելը, նրանց համագործակցությանը նպաստելը, թափանցիկությունը մեծացնելը և շարժունությունն ու ցկյանս ուսումնառությունը խթանելը) անդամ պետությունները

[1] OJ L 390, 31.12.2004, էջ 6
[2] OJ L 394, 30.12.2006, էջ 5
[3] OJ L 255, 30.9.2005, էջ 22

չեն կարող բավարար կերպով հասնել, ապա գործողությունները կարելի է կատարել համայնքային մակարդակով. համայնքը կարող է քայլեր ձեռնարկել՝ համաձայն պայմանագրի 5-րդ հոդվածում սահմանված օժանդակ մեթոդների սկզբունքի: Ըստ հոդվածում սահմանված համամասնության սկզբունքի՝ սույն երաշխավորությունն անհրաժեշտ ոչ մի սահմանից չի անցնում՝ հասնելու այդ նպատակներին այնքանով, որքանով որ այն չի ստեղծում կամ սահմանում որակավորումների ազգային համակարգեր, շրջանակներ կամ կրեդիտների ազգային համակարգեր, ուսումնառության հատուկ արդյունքներ կամ անհատի կարողություններ, ինչպես նաև նպատակ չունի և չի պահանջում որակավորումների համակարգերի ո՛չ մասնատվածություն, ո՛չ էլ ներդաշնակություն,

ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ.

1. խթանել Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական կրեդիտային համակարգը (ՄԿՈՒԵԿ) ՄԿՈՒ որակավորումներին վերաբերող ՈԵՇ-ի բոլոր մակարդակներում, ինչպես սահմանված է Հավելվածներ I-ում և II-ում՝ նպաստելու ցկյանս ուսումնառության և ՄԿՈՒ ուսումնառության արդյունքների վերազգային շարժունությանն ու ճանաչմանը,

2. ստեղծել անհրաժեշտ պայմաններ ու ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի 2012թ.-ից ՄԿՈՒԵԿ-ը կարողանա աստիճանաբար վերաբերել ՄԿՈՒ որակավորումներին ՈԵՇ-ի բոլոր մակարդակներում (համաձայն պետական օրենսդրությանն ու փորձին՝ հիմնվելով փորձարկումների և թեստերի վրա) և կիրառվել ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ համատեքստերում անհատների ձեռք բերած ուսումնառության արդյունքների տեղափոխման, ճանաչման ու կուտակման նպատակով,

3. աջակցել որակավորումների և դիպլոմների համար պատասխանատու հաստատություններն ու իրավասու մարմինները ներգրավող ցանցերի, ՄԿՈՒ ապահովողների, սոցիալական գործընկերների և ՄԿՈՒԵԿ-ի փորձարկմանը, իրագործմանն ու խթանմանը նվիրված համապատասխան շահագրգիռ անձանց եվրոպական և ազգային գործընկերությունների զարգացմանը,

4. երաշխավորել, որ ՄԿՈՒ ոլորտի շահագրգիռ կողմերն ու անհատները ՄԿՈՒԵԿ-ը կիրառելու համար ունենան մուտքի հնարավորություն տեղեկատվական և ուղղորդման ծառայություններ՝ միևնույն ժամանակ նպաստելով անդամ պետությունների միջև տեղեկատվության փոխանակմանը: Բացի այդ, երաշխավորել, որ որակավորումների դեպքում ՄԿՈՒԵԿ-ի կիրառումը պատշաճորեն հրապարակվի իրավասու մարմինների կողմից, իսկ վերջիններիս կողմից լույս

ընծայված “Europass”-ի փաստաթղթերը պարունակեն համապատասխան ճշգրիտ տեղեկատվություն,

5. համաձայն պետական օրենսդրության ու փորձի՝ ՄԿՈՒԵԿ-ն օգտագործելիս կիրառել Մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովման վերաբերյալ Խորհրդի 2004թ. մայիսի 28-ի եզրակացություններում սահմանված ՄԿՈՒ որակի ապահովման սկզբունքները, մասնավորապես ուսումնառության արդյունքների գնահատման, վավերացման և ճանաչման դեպքում,

6. երաշխավորել, որ համապատասխան մակարդակներում առկա լինեն համակարգման և մշտադիտարկման գործառութային մեխանիզմներ՝ համաձայն անդամ յուրաքանչյուր պետության օրենսդրության, կառուցվածքների ու պահանջների, որպեսզի հնարավոր լինի երաշխավորել ՄԿՈՒԵԿ-ն իրագործելու համար ձեռնարկված միջոցների որակը, թափանցիկությունն ու կայունությունը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒՂՂՈՐԴԵԼ ԴԵՊԻ ՀԵՏԵՎՅԱԼԸ.

1. աջակցել անդամ պետություններին 1-ից 6-րդ կետերում հղված առաջադրանքները կատարելու և Հավելված II-ում սահմանված ՄԿՈՒԵԿ-ի սկզբունքներն ու տեխնիկական մանրամասնությունները կիրառելու գործում՝ մասնավորապես խթանելով մասնակցությունը, համագործակցությունը, երկկողմ ուսումնառությունը, օժանդակությունը, տեղեկատվության և խորհրդատվության գործընթացների մեկնարկումը՝ միևնույն ժամանակ շահագրգիռ բոլոր քաղաքացիներին երաշխավորելով մուտքի հնարավորություն ուղղորդման համակարգեր,

2. մշակել կիրառողների ուղեցույցներ և գործիքներ, տեղայնացնել Europass-ի համապատասխան փաստաթղթերը՝ գործակցելով անդամ պետությունների, ազգային և եվրոպական փորձագետների հետ, ինչպես նաև մշակել փորձագիտություն բարձրագույն կրթության հատվածում օգտագործվող ՄԿՈՒԵԿ-ի և ԿՓԵՀ-ի համատեղելիությունն ու համալրելու հնարավորությունը մեծացնելու համար՝ համագործակցելով ՄԿՈՒ և բարձրագույն կրթության փորձագետների և գործածողների հետ եվրոպական և ազգային մակարդակներում, ապահովել ՄԿՈՒԵԿ-ի զարգացման վերաբերյալ պարբերական տեղեկատվություն,

3. անդամ պետությունների հետ մասնակցությամբ խթանել եվրոպական ՄԿՈՒԵԿ ցանցը, որը ներգրավում է ՄԿՈՒ համապատասխան շահագրգիռ կողմերի և պետական իրավասու հաստատությունների, տարածել անդամ պետությունների

միջև ՄԿՈՒԵԿ-ի տեղեկատվության ու փորձի փոխանակման կայուն ծրագիրը և օժանդակել դրան, ստեղծել ՄԿՈՒԵԿ-ի գործածողների մի խումբ՝ նպաստելու գործածողների ուղեցույցի նորացմանը և ՄԿՈՒԵԿ-ի իրագործման համար համագործակցության գործընթացի որակին ու համընդհանուր կապակցվածությանը,

4. մշտադիտարկել և հետևել ձեռնարկված գործողությանը՝ ներառյալ փորձարկումների ու թեստերի արդյունքները, իսկ անդամ պետությունների հետ համագործակցության շնորհիվ իրականացված սույն գործողության գնահատումից հետո Եվրոպական Կառավարությանն ու Խորհրդին զեկուցել ձեռք բերված փորձի և հետագա գործողությունների մասին՝ ներառյալ սույն երաշխավորության վերանայումն ու տեղայնացումը, որը ներառում է հավելվածների և ուղղորդման նյութի նորացումը՝ համագործակցելով անդամ պետությունների հետ:

Կատարված է.

Եվրոպական Կառավարության համար
Նախագահ

Խորհրդի համար
Նախագահ

ՀԱՎԵԼՎԱԾ I

Սահմանումներ

Սույն երաշխավորությունը կիրառելու համար կպահանջվեն հետևյալ սահմանումները.

- «Որակավորում» նշանակում է գնահատման և վավերացման գործընթացի ֆորմալ արդյունք, որը ձեռք է բերվում, երբ իրավասու հաստատությունը վճռում է, որ անհատը ստացել է տվյալ չափորոշիչներին համապատասխան ուսումնառության արդյունքներ,

- «Ուսումնառության արդյունքներ» նշանակում է ապացույց այն մասին, թե ինչ գիտի, ինչ է հասկանում և ինչ է ընդունակ անել ուսումնառուն ուսումնառության գործընթացն ավարտելիս, որոնք սահմանվում են հետևյալ եզրույթներով՝ գիտելիք, հմտություններ և կարողություններ,

- «Ուսումնառության արդյունքների մոդուլ» (մոդուլ) նշանակում է որակավորման բաղադրիչ մաս, որը բաղկացած է գիտելիքի, հմտությունների ու կարողությունների կապակցված շարքից և կարող է գնահատվել ու վավերացվել,

- «Ուսումնառության արդյունքների կրեդիտ» (կրեդիտ) նշանակում է անհատի ուսումնառության արդյունքների շարք, որոնք գնահատվել են և կարող են կուտակվել որակավորմանը զուգահեռ կամ տեղափոխվել ուսումնառության այլ ծրագրեր ու որակավորումներ,

- «Իրավասու հաստատություն» նշանակում է հաստատություն, որը պատասխանատու է որակավորումների նախագծման և շնորհման կամ ՄԿՈՒԵԿ-ի հետ կապված մոդուլների կամ այնպիսի այլ գործառույթների ճանաչման համար, ինչպիսիք են ՄԿՈՒԵԿ-ի միավորների բաշխումն ըստ որակավորումների և մոդուլների, ուսումնառության արդյունքների գնահատումը, վավերացումն ու ճանաչումը՝ համաձայն մասնակից երկրների կանոնների և փորձերի,

- «Ուսումնառության արդյունքների գնահատում» նշանակում է մեթոդներ և գործընթացներ, որոնք օգտագործվում են՝ հաստատելու, թե իրականում ուսումնառուն ինչ չափով է ձեռք բերել որոշակի գիտելիք, հմտություններ և կարողություններ,

- «Ուսումնառության արդյունքների վավերացում» նշանակում է մի գործընթաց, որը հաստատում է, որ ուսումնառուի կողմից ձեռք բերված ուսումնառության գնահատված արդյունքները համապատասխանում են մոդուլի կամ որակավորման համար պահանջվող որոշակի արդյունքներին,

- «Ուսումնառության արդյունքների ճանաչում» նշանակում է մոդուլների կամ որակավորումների շնորհման միջոցով ուսումնառության ձեռք բերված արդյունքների պաշտոնապես հաստատման գործընթաց,

- «ՄԿՈՒԵԿ-ի միավորներ» նշանակում է որակավորման մեջ ուսումնառության արդյունքների համընդհանուր կշռի և որակավորման հետ կապված մոդուլների հարաբերական կշռի թվային նկարագրություն:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՄԿՈՒԵԿ-ի սկզբունքներն ու տեխնիկական մանրամասնությունները

ՄԿՈՒԵԿ-ը տեխնիկական շրջանակ է անհատի ուսումնառության արդյունքների տեղափոխման, ճանաչման և, հարկ եղած դեպքում, կուտակման համար՝ որակավորում ստանալու նպատակով: ՄԿՈՒԵԿ-ի գործիքներն ու մեթոդաբանությունն ընդգրկում են որակավորումների նկարագրությունն ուսումնառության արդյունքների մոդուլներով, տեղափոխման և կուտակման գործընթացները, ինչպես նաև հավելյալ այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են ուսումնառության համաձայնագրերը, արձանագրությունների պատճենները և ՄԿՈՒԵԿ-ը գործածողների ուղեցույցները:

ՄԿՈՒԵԿ-ը նպատակ ունի խթանել ուսումնառության արդյունքների ճանաչումը շարժունության շրջանակում՝ համաձայն պետական օրենսդրության, որակավորում ստանալու ակնկալիքով: Պետք է նշել, որ ՄԿՈՒԵԿ-ը ոչ մի նոր արտոնություն չի ընձեռում քաղաքացիներին՝ ձեռք բերելու ուսումնառության արդյունքների ավտոմատ ճանաչում: Տվյալ որակավորման համար դրա կիրառումը տեղի է ունենում համաձայն անդամ երկրների օրենսդրության, կանոնների ու կանոնակարգերի և հիմնված է հետևյալ սկզբունքների ու տեխնիկական մանրամասնությունների վրա.

1. Ուսումնառության արդյունքների մոդուլներ

Մոդուլը որակավորման բաղկացուցիչ մասն է, որը բաղկացած է գնահատման, հմտությունների և կարողությունների փոխկապակցված մի շարքից, որոնք կարելի է գնահատել ու վավերացնել ՄԿՈՒԵԿ-ի համապատասխան մի շարք միավորներով: Որակավորումն ամփոփում է սկզբունքորեն մի քանի մոդուլներ և կազմված է մոդուլների ամբողջական շարքից: Հետևաբար, ուսումնառուն կարող է որակավորում ստանալ՝ կուտակելով պահանջվող մոդուլները, որոնք ձեռք են բերվել տարբեր երկրներում և տարբեր համատեքստերում (ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ)՝ միևնույն ժամանակ հաշվի նստելով մոդուլների կուտակմանն ու ուսումնառության արդյունքների ճանաչմանը վերաբերող պետական օրենսդրության հետ:
Որակավորում ձևավորող մոդուլները պետք է.

- բնութագրվեն ընթեռնելի և հասկանալի եզրույթներով՝ վերագրվելով գիտելիքին, հմտություններին ու կարողություններին, որոնք պարունակում են իրենք,

- կառուցվեն և ձևավորվեն կապակցված եղանակով՝ նկատի ունենալով համընդհանուր որակավորումները,

- կազմվեն մոդուլի պարունակած ուսումնառության արդյունքների առանձին գնահատման և վավերացման հնարավորություն տվող եղանակով:

Մոդուլը կարող է լինել հատուկ մեկ որակավորման համար կամ ընդհանուր մի քանի որակավորումների համար: Մոդուլ սահմանող ուսումնառության ակնկալվող արդյունքները կարելի է ձեռք բերել անկախ տեղից կամ եղանակից: Հետևաբար, մոդուլը չպետք է շփոթել ֆորմալ ուսումնառության ծրագրի կամ ուսուցման ապահովման բաղադրիչի հետ:

Ուսումնառության արդյունքների մոդուլների հատկանիշները սահմանելու, տվյալ որակավորման մոդուլները կապակցելու և կուտակելու կանոններն ու ընթացակարգերը սահմանվում են ուսուցման գործընթացում ներգրավված իրավասու հաստատությունների և գործընկերների կողմից՝ համաձայն պետական կամ տարածաշրջանային կանոնների:

Մոդուլի մանրամասնությունները պետք է ներառեն.

- մոդուլի ընդհանուր անվանումը,

- որակավորման (կամ որակավորումների, որոնց հետ առնչվում է մոդուլը) ընդհանուր անվանումը, եթե կիրառելի է,

- որակավորման հենքը՝ համաձայն ՈԵՇ-ի, և եթե անհրաժեշտ է, որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) մակարդակի՝ ՄԿՈՒԵԿ-ի որակավորման հետ առնչություն ունեցող կրեդիտի միավորները,

- մոդուլի պարունակած ուսումնառության արդյունքները,

- ուսումնառության արդյունքների գնահատման ընթացակարգերն ու չափանիշները,

- մոդուլի հետ առնչություն ունեցող ՄԿՈՒԵԿ-ի միավորները,

- մոդուլի վավերականությունը, եթե անհրաժեշտ է:

2. Ուսումնառության արդյունքների տեղափոխում և կուտակում, ՄԿՈՒԵԿ-ի գործընկերություններ

ՄԿՈՒԵԿ-ի մի ձևաչափում ձեռք բերված ուսումնառության արդյունքների մոդուլները գնահատվում և միայն հաջող գնահատումից հետո տեղափոխվում են մեկ այլ ձևաչափ: Այս երկրորդ համատեքստում նրանք վավերացվում և ճանաչվում են իրավասու հաստատության կողմից՝ որպես որակավորման պահանջների մի մաս, որը ձգտում է ստանալ անհատը: Ուսումնառության արդյունքների մոդուլները հետագայում կարելի է կուտակել՝ համաձայն պետական կամ տարածաշրջանային կանոնների: Ուսումնառության արդյունքների մոդուլների գնահատման, վավերացման, կուտակման և ճանաչման ընթացակարգերն ու ուղենիշները նախագծվում են համապատասխան իրավասու հաստատությունների և ուսուցման գործընթացում ներգրավված գործընկերների կողմից:

ՄԿՈՒԵԿ-ի վրա հիմնված և ֆորմալ ուսումնառության համատեքստերում ձեռք բերված ուսումնառության արդյունքների հետ առնչություն ունեցող կրեդիտների փոխանցումը պետք է խթանի գործընկերությունները և իրավասու հաստատություններին ներգրավող ցանցերը՝ շնորհելու որակավորումներ, մոդուլներ կամ կրեդիտներ ձեռք բերված ուսումնառության արդյունքները փոխանցելու և վավերացնելու համար:

Գործընկերությունների հաստատման նպատակն է.

- ապահովել Փոխըմբռնման Հուշագրի (“MoU”) մեջ սահմանված գործընկերների համագործակցության և ցանցավորման ընդհանուր շրջանակ, որի միջոցով հաստատվում է փոխվստահության մթնոլորտ,

- աջակցել գործընկերներին ուսումնառուների կրեդիտների փոխանցման որոշակի գործողությունների նախագծման գործում:

Փոխըմբռնման Հուշագիրը պետք է հաստատի, որ գործընկերները.

- ընդունում են միմյանց կարգավիճակը՝ որպես իրավասու ինստիտուտներ,

- ընդունում են միմյանց որակի ապահովման, գնահատման, վավերացման և ճանաչման չափանիշներն ու ընթացակարգերը՝ որպես բավարար հիմք կրեդիտների փոխանցման նպատակների համար,

- համաձայն են գործընկերության գործունեության այնպիսի պայմանների հետ, ինչպիսիք են նպատակները, տևողությունը և Փոխըմբռնման Հուշագրի վերանայման գործողությունները,

- համաձայն են կրեդիտների փոխանցման նպատակների համար կիրառվող որակավորումների համեմատականության հետ՝ օգտագործելով ՈԵՇ-ի կողմից հաստատված հենքային մակարդակները,

- ճանաչում են այլ դերակատարների ու իրավասու հաստատությունների (ինչպես նաև նրանց գործառույթները), որոնք կարող են ներգրավված լինել առնչվող գործողության մեջ:

Որպեսզի ՄԿՈՒԵԿ-ը կիրառվի ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության համատեքստում կամ Փոխըմբռնման Հուշագրի շրջանակներից դուրս ձեռք բերված ուսումնառության արդյունքների համար, իրավասու հաստատությունը, որը կոչված է՝ շնորհելու որակավորումներ, մոդուլներ կամ կրեդիտներ, պետք է հաստատի տվյալ ուսումնառության արդյունքների որոշարկման, վավերացման ու ճանաչման ընթացակարգերը և մեխանիզմները համապատասխան մոդուլների և ՄԿՈՒԵԿ-ի միավորների շնորհման միջոցով:

3. Ուսումնառության համաձայնագիր և անձնական գործ

Երկու գործընկեր և մեկ շարժուն ուսումնառու ներգրավող կրեդիտների փոխանցում կիրառելու համար ուսումնառության համաձայնագիրը բաղկացած է լինում ուսուցման և վավերացման գործընթացում ներգրավված երկու իրավասու հաստատություններից և ուսումնառուից (Փոխըմբռնման Հուշագրի շրջանակում): Այն պետք է.

- տարբերակի իրավասու «վավերացման» և «գնահատման» հաստատությունները[1],

- որոշարկի շարժունության ժամանակահատվածի որոշակի պայմանները, ինչպիսիք են ուսումնառուի ինքնությունը, շարժունության ժամանակահատվածի տևողությունը, ուսումնառության ակնկալվող արդյունքներն ու ՄԿՈՒԵԿ-ի միավորները:

Համաձայն ուսումնառության համաձայնագրի՝ եթե ուսումնառուն ձեռք է բերել ուսումնառության ակնկալվող արդյունքները և դրանք դրական են գնահատվել «գնահատման» հաստատության կողմից, ապա «վավերացման» հաստատությունը պետք է

[1] «Վավերացման» հաստատությունն այն հաստատությունն է, որը վավերացնում և ճանաչում է ուսումնառուի ձեռք բերած ուսումնառության արդյունքները: «Գնահատման» հաստատությունն ապահովում է ուսուցում ուսումնառության արդյունքների համար և գնահատում է ուսումնառության ձեռք բերված արդյունքները:

վավերացնի և ճանաչի դրանք՝ որպես որակավորման պահանջների մի մաս՝ համաձայն իրավասու հաստատության կողմից հաստատված կանոնների ու ընթացակարգերի:

Գործընկերների միջև տեղափոխությունը կարող է կիրառվել ֆորմալ, եթե անհրաժեշտ է, ոչ ֆորմալ և ինֆորմալ համատեքստերում ձեռք բերված ուսումնառության արդյունքների համար: Ուստի, ուսումնառության ձեռք բերված արդյունքների կրեդիտների փոխանցումը տեղի է ունենում երեք փուլով.

- «գնահատման» հաստատությունը գնահատում է ուսումնառության ձեռք բերված արդյունքները և ուսումնառուին շնորհում է կրեդիտ: Ուսումնառության ձեռք բերված արդյունքները և ՄԿՈՒԵԿ-ի համապատասխան միավորները արձանագրվում են ուսումնառուի «անձնական գործում»[1]:

- «վավերացման» հաստատությունը վավերացնում է կրեդիտը՝ որպես ուսումնառուի ձեռքբերումների համապատասխան բնութագիր,

- «վավերացման» հաստատությունն այնուհետև ճանաչում է ուսումնառության ձեռք բերված արդյունքները: Այս ճանաչումը մոդուլների և ՄԿՈՒԵԿ-ի համապատասխան միավորների շնորհման առիթ է հանդիսանում՝ համաձայն «վավերացման» համակարգի կանոնների:

Իրավասու «վավերացման» հաստատության կողմից վավերացումն ու ճանաչումը կախված է իրավասու «գնահատման» հաստատության կողմից ուսումնառության արդյունքների դրական գնահատումից՝ համաձայն հստակեցված ընթացակարգերի և որակի ապահովման չափանիշների:

4. ՄԿՈՒԵԿ-ի միավորներ

ՄԿՈՒԵԿ-ի միավորներն ապահովում են հավելյալ տեղեկատվություն որակավորումների և մոդուլների մասին թվային ձևաչափում: Ուսումնառության ձեռք բերված արդյունքներից անկախ լինելով՝ նրանք չեն ունենա ոչ մի արժեք այն որակավորման համար, որին վերաբերում են. դրանք արտացոլում են մոդուլների ձեռքբերումն ու կուտակումը: ՄԿՈՒԵԿ-ի միավորների կիրառման ընդհանուր մոտեցումը գործի դնելու համար օգտագործվում է համաձայնագիր, ըստ որի 60 միավոր հատկացվում է ՄԿՈՒ մեկ լիարժեք ֆորմալ տարվա ընթացքում ակնկալվող ուսումնառության արդյունքներին:

[1] Անձնական գործը մի փաստաթուղթ է, որը վկայում է ուսումնառուի ուսումնառության գնահատված արդյունքների, մոդուլների և ՄԿՈՒԵԿ-ի շնորհված միավորների մասին:

ՄԿՈՒԵԿ-ում միավորների բաշխումը կատարվում է երկու փուլով՝ ՄԿՈՒԵԿ-ի միավորները նախնառաջ ամբողջովին հատկացվում են որակավորմանը, իսկ այնուհետև դրա մոդուլներին: Տվյալ որակավորման համար ուսումնառության մեկ ֆորմալ համատեքստն ընդունվում է որպես հենք, և, համաձայն ընդունված կարգի, միավորների ընդհանուր թիվը հատկացվում է որակավորմանը: Այս ընդհանուր թվից ՄԿՈՒԵԿ-ի միավորները բաշխվում են յուրաքանչյուր մոդուլին՝ ըստ որակավորման իրենց հարաբերական կշռի:

Այն որակավորումների համար, որոնք չունեն ֆորմալ ուսումնառության հենք, ՄԿՈՒԵԿ-ի կրեդիտների միավորները կարող են բաշխվել գնահատման միջոցով՝ համեմատվելով մեկ այլ որակավորման հետ, որն ունի ֆորմալ հենքային համատեքստ: Որակավորումների համեմատականությունը հաստատելու համար իրավասու հաստատությունը պետք է վկայակոչի ՈԵԾ-ի և թերևս ՈԱԾ-ի համարժեք մակարդակը կամ անմիջական առնչություն ունեցող մասնագիտական ոլորտի ուսումնառության արդյունքների նմանությունը:

Ուսումնառության արդյունքների մոդուլի հարաբերական կշիռը պետք է հաստատվի՝ համաձայն հետևյալ չափանիշների.

- ուսումնառության արդյունքների հարաբերական կարևորություն, որը բաղկացած է աշխատաշուկայում մասնակցության, որակավորման մակարդակների բարձրացման կամ սոցիալական ինտեգրման մոդուլից,

- մոդուլում ուսումնառության արդյունքների բարդություն, սահման և ծավալ,

- ջանքեր, որոնք անհրաժեշտ են ուսումնառուին՝ ձեռք բերելու մոդուլի համար պահանջվող գիտելիք, հմտություններ և կարողություն:

Մի քանի որակավորումներին ընդհանուր ցանկացած մոդուլի հարաբերական կշիռը (ինչպես արտահայտված է ՄԿՈՒԵԿ-ի միավորներում) կարող է տարբեր լինել այս որակավորներում:

ՄԿՈՒԵԿ-ի միավորների բաշխումը, որպես կանոն, որակավորումների և մոդուլների նախագծման մի մասն է: Դրանք պատրաստվում են որակավորման նախագծման և պահպանման համար պատասխանատու կամ հենց այս առաջադրանքի համար լիազորված իրավասու հաստատության կողմից: Այն երկրներում, որտեղ արդեն գործում է միավորների ազգային համակարգ, համապատասխան իրավասու հաստատությունները սահմանում են գործողություններ, որպեսզի ազգային կրեդիտային միավորները փոխարինվեն ՄԿՈՒԵԿ-ի միավորներով:

Որակավորման կամ մոդուլի դրական ձեռքբերումը շարժման մեջ է դնում ՄԿՈՒԵԿ-ի համապատասխան միավորների շնորհումը՝ անկախ դրանք ստանալու համար պահանջվող իրական ժամկետից:

Սովորաբար մոդուլի տեղափոխումը հանգեցնում է ՄԿՈՒԵԿ-ի համապատասխան միավորների տեղափոխմանը, որպեսզի դրանք ներառվեն, երբ ուսումնառության տեղափոխված արդյունքները ճանաչվեն՝ համաձայն պետական կամ տարածաշրջանային կանոնների: Իրավասու հաստատությունն ինքն է որոշում՝ արդյոք ՄԿՈՒԵԿ-ի միավորները պետք է կրկին հաշվի առնվեն, թե ոչ, քանի դեռ այս նպատակի համար սահմանված կանոններն ու մեթոդաբանությունները թափանցիկ են և հիմնված են որակի ապահովման սկզբունքների վրա:

Ոչ ֆորմալ կամ ինֆորմալ ուսումնառության միջոցով ձեռք բերված ցանկացած որակավորում (որի համար ֆորմալ ուսումնառության հենքը ևս կարող է ճանաչվել), ինչպես նաև համապատասխան մոդուլ կրում է ՄԿՈՒԵԿ-ի միևնույն միավորները, ինչպես հենքը, քանի դեռ ձեռք են բերվում ուսումնառության միևնույն արդյունքները: